ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՆԻՆ ՈՐՊԷՍ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Գինին առողջապահութեան մէջ այն օգուտն ունի, որ ամրացնում է մարդու ստամոքսը, ամեն անգամ տալիս է նրան զօրութիւն, երբ նա կատարում է մարսողութեան գործողութիւնը. գինին օգնում է կերակրի մարսելուն, նորոգում և գրգռում է ստամոքսային հիւթերը. Նա ոչ միայն մարսեցնում է ծանր կերակուրները, կազդուրում է մարդու ծարաւը, այլ բացի դրանցից, գինին սաստիկ օգնում է և ուժ է տալիս արեան շրջանառութեանը և այն բոլոր հիւթերին, որ գտնվում են մեր կազմուածքի մէջ։

Իր հեղինակութեամբ յայտնի Լիբիխը, ի միջի այլոց ասաց, որ գինին կազդուրող միջոցներից ամենալաւն է, թէ նա իրան յատուկ գործունէութեամբ փոխարինում է խանգարման հետեանքները, որ առաջ են գալիս աշխատութիւնից, յոգնածութիւնից, մարդի ուժերի և կենսականութեան վատնելուց, որ տեղի են ունենում կեանքի այլ և այլ պարապմունքների մէջ. այդ բոլորը կայացնում է գինու ֆիզիքային գործողութիւնը։

Եւ որովհետև, ամեն մի հասարակական դրութեան մէջ մեր խելքը ենթարկվում է մարմնին, և կարծես թէ, նիւթական բարեկեցութիւնից առաջ է գալիս մտաւոր ընդունակութիւնների լաւ վիճակը.—այդ դէպքում, երբ մեր սիրելի և զօրացնող ըմպելիի միջոցով մեր մարմինը կը պահպանէ իր կատարեալ հաւասարակշռութիւնը, այն ժամանակ մեր մտքերն և լաւ հաւասարակշռութեան մէջ կը գտնվեն, և այն ժամանակ կը յայտնվեն մտաւոր ընդունակութիւնների ուժերը. տխրութիւնը և սրտի ցաւը, տրտում մտքերը և անախորժ տպաւորութիւնները կը փոխարինվեն բաւականութեան զգացմունքով և ուրախութեան ոգևորութեամբ. մինչև անգամ ամենածանր կորուստները հեշտութեամբ տանելի կը լինեն. ահա ինչումն է կայանում բարոյա-հոգեկան, այսինքն մտաւոր առողջապահութիւնը։

Թէ ֆիզիքային և թէ մտաւոր կողմից, գինին հաւասարակշռութեան գլխաւոր գործիչն է. Նա ներգործում է այն հասարակ մարմինների միջոցով, որ ինքը բնութիւնը դրել է նրա բաղադրութեան մէջ. Այդ մարմինները բնական ընդունակութիւն ունեն յարմարվելու մարդկային կազմուածքի էական տարերքին. Դրանք են՝ կալաքարային հիւթերը, պոտասը և նատրոնը, որ գտնվում են մարդու արեան և ջղերի մէջ. դա ալկօհօլն է, որ է գլխաւոր գործիչ գրգռման, խմորման և անհրաժեշտ միջոց ֆիզիօլօգիական գործողութեան. դա մի աղային նիւթ է, որ գործում է որպէս ամրացնող միջոց, որը առաւելապէս զօրացնում է մարսողութիւնը, և վերջապէս դա մի գեղեցկացնող նիւթ է, որ աւելի կենդանի կերպարանք է տալիս մեր մարմնի կաշուն, և կանոնաւոր գոյն է տալիս մարդու արեանն, որ զուարճանում է լաւ առողջութիւնով։

Եթէ գինին առողջապահութեան գլխաւոր գործիչներից մէկն է, առողջապահութիւնն էլ գլխաւոր երաշխաւորն է կեանքի. Խոհեմութիւնը ստիպում է մարդուն չը խնայել իր հոգսերը և ուշադրութիւնը գինու ընտրութեան վերաբերութեամբ, որովհետև նա պէտք է ծառայէ որպէս գլխաւոր օգնական նրա մարսողութեան և որպէս աղբիւր, որտեղից մարդկային կազմուածքը պէտք է ստանայ իր ուժերի նորոգութիւնը. Որովհետև «գինին, ինչպէս ասում է Հիպոկրատը, զարմանալի կերպով յարմարեցրած է մարդուն, թէ նրա առողջ և թէ հիւանդ դրութեան մէջ, այն պայմանով միայն, որ պէտք է գործ ածել նրան չափաւորութեամբ, իւրաքանչիւրի կազմուածքի համեմատ»։

Այս պատճառով, պէտք է ուշադրութեամբ ընտրել գինին, որովհետև, եթէ նա լաւ յատկութիւններ ունի, այն ժամանակ նպաստում է մարդու առողջանալուն, թէև դա կատարվէր դանդաղ և դժուար կերպով. Վատ յատկութիւն ունեցող գինին կարող է վնասել առողջութեանը և նոր հիւանդութիւններ պատճառել։

«Հարկաւոր է որոնել լաւ համ ունեցող և թունդ գինի», ասում է պ. Բուշարդա, Փարիզի բժշկական բաժնի գիտնական պրոֆեսօրը.— «պէտք է գերադասել փոքր քանակութեամբ լաւ գինին, քան մեծ քանակութիւնը, որ միջակ յատկութիւն ունի. պէտք է սովորաբար խմել գինին նախաճաշիկը և ճաշը վերջացնելուց յետոյ, բայց թոյլ է տրվում և սեղանի ժամանակ»։

Ախորժ համ ունեցող և թունդ գինին ամենալաւ օգնութիւնն է, որ ցոյց է տալիս առողջապահութիւնը արեան սակաւութեան, մարսողութեան թուլութեան և կենսական զօրութեան սպառման դէմ. Այդ պատճառով, հարկաւոր է ընտրել ախորժ համ ունեցող և թունդ գինի, որ լինէր առատ իր աղային նիւթերով, որ բարձր լինէր իր ալկօհօլով, որ ունենար իր մէջ առատ կալաքարային աղեր, և գոյնով լինէր մուգ-կարմիր, որ փոքր քանակութեամբ ընդունելու ժամանակ ցոյց տար աւելի ներգործութիւն, աւելի ուժ, քան թէ այն գինիները, որ գործ են ածվում մեծ քանակութեամբ. Բոլոր այդ յատկութիւնները բովանդակվում են Սէն-Ռաֆայէլեան գինու մէջ, որպէս վկայում են նոյն իսկ գիտնականները, թէ այդ գինին ունի չափազանց կազդուրող յատկութիւն և ամենալաւն է բոլոր զօրացնող միջոցներից։

Նա խիստ ախորժելի է իր անուշահոտութեամբ, փափուկ է իր համով, ջերմացնում է ստամոքսը, և կատարում է ամենազգալի ներգործութիւն այն ամեն կազմուածքների վրա, որոնց պէտք է ամրացնել առողջապահութեան միջոցով. Պէտք է խմել նրան փոքր չափով, այսինքն մի փոքրիկ բաժակ նախաճաշիկից կամ ճաշից յետոյ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ՊՕՊՕՎ Կ. և Ս. ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

Մոսկվայի մէջ։

Պատիւ ունենք յայտնել ընդհանրութեանը, որ ներկայ տարուայ յունիսի 2-ից Թիֆլիսի մէջ, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, Միրիմանովի տանը կը բացանենք մեր մագազինը, ուր կը վաճառուի թէ մեծ և թէ փոքր քանակութեամբ (оптовая и розничная продажа) մեր ֆիրմայի չայ (թէյ) կրշուած Մոսկվայում մեր տանը, մեր անձնական հսկողութեան տակ: Բացի թէյից Թիֆլիսի մեր մագազինում կը մանրավաճառուի նոյնպէս շաքար և ղավա:

1—5

Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեան, խմբագիր „Աշխատանք“ լրագրի, պատրաստում է Թիֆլիսի ռէալական և կլասիք ուսումնարանների համար ուսանողներ, տալիս է առանձնապէս դասեր մաթեմատիքայի, երկակի իտալական հաշւեգիտութեան, անատօմիայի, ֆրանսերէն, ռուս և հայ լեզուների և այլն: Պատրաստ է նոյնպէս տեսչական կամ ուսուցչական պաշտօնով գնալ հայ գաւառ: Պայմանները ուսումնարանական վարչութիւնք և մասնաւոր անձինք բարեհաճեն ուղղել այս հասցէով. Тифлисъ, въ табачный магазинъ Теръ-Осипова подъ гостинницею *Кавказъ*, или же: въ типографію Мосеса Вартаніанъ, редактору газеты *Трудъ*.

3—3

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԷԺԱՆ ԳՆՈՎ ծախվում է պորտլանդեան շօտլանդիական **ՑԵՄԵՆՏ** Փօթիի մէջ Էլիզբար **ԲԱԲԱԼՕՎԻ** մօտ, Քութայիսի մէջ **ԿՈՒՐՑՕՎԻ** մօտ: Նոյնպէս ծախվում են չափաւոր գներով **ԲՆԱԿԱՆ ՄԵՂՐԱՄՈՄԵՐ** սեփական գործարանից, **ԹԻՖԼԻՍՈՒՄ** Սիօնսկայա փողոցի վրա, **ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ** և **ԳՕՐԻՈՒՄ**

ԻՎԱՆ ԿՈՒՐՑՕՎ.

6—11 (2)

---

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների.

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են գրել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

9—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՖՖԻ „ԽԵՆԹԸ“** անունով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահտեսի-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ՝ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՒՐԻԶ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АРѢСЯНЦУ.

Թիֆլիզում կազմվում է «Մարմնամարզական ընկերութիւն» (Гимнастическое общество), որի նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժվելու մարմնամարզութեան սրախաղութեան (фехшованье) և հրացան արձակելու մէջ, քաղաքից դուրս զբօսանքներ և ուրիշ թոյլ տուած զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են ֆիզիկական կարողութիւնը։

Ընկերութեան կանոնադրութիւնը տէրութիւնից արդէն հաստատուած է և տպված է № 90 «Кавказъ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին։

«Մարմնամարզական ընկերութեան» անդամ գրվել և տարեկան 10 րուբլի վճարել կարելի է.

1) Փոխարքայի գլխաւոր կառավարութեան դեպարտամենտում, Կարլ Կարլօվիչ Կեստերի մօտ, ամեն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցերեկվայ.

2) Վիկտոր Ալէքսանդրօվիչ Դինգելշտեդի մօտ 6-ից մինչև 8-ը երեկոյեան, Թամամշևի տանը, Սօլդատսկի բազարի վրա.

3) «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ.

4) Ալէքսանդր Ալէքսանդրօվիչ Բրունի մօտ, Միխայելովսկայա փողոցի վրա, ռուսական մագազինում.

„ԽԵՆԹԸ“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից. Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրոնական գրավաճառանոցում“, „կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազիններում։

Գինն է **1** րուբլ **20** կոպ.

„ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՈՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գլխաւոր գրասենեակի մէջ, Երևանսկայա հրապարակի վրա, Ջակելու տանը բացված է ստորագրութիւն յօգուտ ՚ի Տէր հանգուցեալ կայսր Ալէքսանդր II-ի **ՈՐԲԱՆՈՑԻ**, որ բացվելու է Թիֆլիսի մէջ.

10—15

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% **ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** մուրաբաներ, կոնֆեկտներ, ԿԱԿԱՕ, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ, պղնձներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկո, պարուսին, թաշկինակներ, երեսրբիչներ, կլեօնկա, գուլպաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՑՆ, խաւրիս, կօնեակ և այլն։ ԹԷՅ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։**

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մանգնեզիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէմ, ԽԻՆԱՅԻ գինի ջերմի դէմ, կարբօլեան ՓՈՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկլօզետի համար, պարսկական փոշի։ 5—100

ՄԵԺԵՎՕԻ ԻՆԺԵՆԵՐ ՍԵՐԳԷՅ ԻՎԱՆՕՎԻՉ ԲԱԳԱՏՈՒՐՕՎ ընդունում է. կազմել ՑԱՏԱԿԱԳԾԵՐ (պլաններ), գծագրներ, պրոֆիլներ, կատարում է կալուածների, հողերի և անտառների բաժանումն գնահատողական գիտնական հիմունքների վրա, կատարում է ընդօրինակումներ (съемки) և հարթաչափութիւններ (нивеллировка) ԲԱԺԱՆՈՒՄ Է ԱՆՏԱՌՆԵՐԸ կանոնաւորապէս գործածելու համար, գնահատում է հողերը, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ է տալիս երկրաչափական և կալուածական գործերի վերաբերութեամբ և մի և նոյն ժամանակ կալուածական գործերի մէջ մասնագէտ լինելով իրաւաբանական, տեխնիկական և տնտեսական կողմերից, պատրաստ է որ և է հիմնարկութեան հաւատարմատար լինել կալուածական և երկրաչափական գործերի համար։ ՀԱՍՑԷՆ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ թողնել „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը։

2—10

Дозволено цензурою, Тифлисъ. 29 Мая 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.